ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ 14 ապրիլի 2022թ. ժամը 16:00 ***ք. Սպիտակ***

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 15-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Համլետ Մազմանյանը, Լուսինե Ավետիսյանը, Արտակ Մաթոսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Աննա Աջամյանը, Սամվել Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը /առցանց/, Նունե Էհտիբարյանը, Վարդուհի Թումանյանը, Սարիբեկ Ամիրյանը, Վահե Ղազարյանը, Սասուն Ասատրյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 12 անդամներ՝ Մարտին Հաջյանը, Կարեն Հայրապետյանը, Գագիկ Յայլոյանը, Զալիկո Համբարյանը, Կարինե Դիլաքյանը, Արամայիս Փիլոյանը, Գագիկ Սահակյանը, Թամարա Լամբարյանը, Նարինե Հակոբյանը, Գուրգեն Փիլոյանը, Արկադի Ասատրյանը, Մանուշ Աթյանը, /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին Սպիտակ համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները, համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վարուժան Ապրեսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի հերթական նիստի օրակարգի նախագիծը:

Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություններ, առաջարկություններ չեղան:

Սպիտակ համայնքի ավագանու անդամ Սասուն Ասատրյանը հանդես եկավ առաջարկությամբ, որն ուղղված էր Սպիտակ համայնքի ավագանու անդամներին: Նա նշեց, որ ավագանին իր աշխատանքները կազմակերպում է հանձաժողովների միջոցով, ունեն ձևավորված երեք հանձնաժողով, ուստի ցանկալի կլիներ հարցերի նախագծերը մինչև ավագանու նիստում քննարկվելը, այն

քննարկվեր հանձնաժողովների կողմից հրավիրված նիստերում, հարցերի վերաբերյալ տրամադրվեր եզրակացություններ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ողջունեց նման քայլը, նշելով, որ այն էլ ավելի կօգնի աշխատակազմի աշխատանքներին, իսկ հանձաժողովների աշխատանքները կազմակերպելու համար կտրամադրվի Սպիտակի համայնքապետարանի նիստերի դահլիճը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի հաղորդումն ընդունելու մասին

/Զեկուցող՝ Վ. Ապրեսյան/

2) «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը, գտնվելու վայրի հասցեն փոփոխելու և նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխելու և կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

4) «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 43-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Օրակարգը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

1. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Վ" ԱՊՐԵՍՅԱՆ)

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վարուժան Ապրեսյանը մանրամասն ներկայացրեց Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի վերաբերյալ հաղորդումը"

Սպիտակ համայնքի 2022թ. բյուջեն 1-րդ եռամսյակի կտրվածքով կատարվել է՝

1. ***Եկամուտների մասով***՝ կատարողականը կազմել է 90,4 տոկոս:

Տարեսկզբի ազատ մնացորդը կազմել է 241 886,8 հազար դրամ:

2. Ծախսերի կատարման մասով բյուջեն կատարվել է 31,6 տոկոսով:

Վարչական բյուջեի եկամուտները ՝ կատարողականը կազմել է 95,8 տոկոս:

բ.Գույքահարկ փոխադրամիջոցների համար՝ կատարողականը կազմել է 94,2 տոկոս:

գ. Պետական տուրքեր

Պետական տուրքերի գծով ՝ կատարողականը կազմել է 161,0 տոկոս:

դ. Տեղական տուրքեր

Տեղական տուրքերի գծով բյուջեն կատարվել է 94,3 տոկոսով:

ե. Այլ եկամուտների մասով

- Մուտքեր տուժերից, տուգանքներից նախատեսված 150,0 դրամի դիմաց փաստացի կազմել է 50,0 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 33,3 տոկոս:

զ.Վարչական գանձումների մասով ***համայնքի կողմից մատուցած ծառայությունների գծով***՝ կատարողականը կազմել է 72,6 տոկոս:

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտները նախատեսված 63 991,0 դրամի դիմաց փաստացի կազմել են 39 075,3 հազար դրամ:

Վարչական բյուջեի ծախսերը՝ կատարողականը կազմել է 46,4 տոկոս:

Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ՝ կատարողականը կազմել է 46,0 տոկոս:

-Տնտեսական հարաբերություններ՝ նախատեսված 10 217,0 հազար դրամի դիմաց կատարվել են 960,9 հազար դրամ:

Շրջակա միջավայրի պաշպանություն ՝ նախատեսված 31 542,1 հազար դրամի դիմաց ծախսվել է 10 661,5 ազար դրամ,

-Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ՝ կատարողականը կազմել է 41,4 տոկոս,

- ***Հանգիստ, մշակույթ, սպորտ և*** կատարողականը կազմել է 46,2 տոկոս,

-***Կրթություն***՝ նախատեսված 59 402,3 հազար դրամի դիմաց փաստացի ծախսվել է 26 226,0 հազար դրամ: Կատարողականը կազմել է 44,1 տոկոս

- ***Սոցիալական պաշտպանությանն*** ուղղված ծախսերը նախատեսվել 6 670,0 հազար դրամ՝ հատկացվել է 788,0 հազար դրամ:Կատարողականը կազմել է 12,0 տոկոս:

- ***Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե նախատեսվել է հատկացնել 238 087,3 հազար դրամ, փաստացի հատկացում չի կատարվել :***

<u>Ֆոնդային բյուջեի ծախսեր</u>

Ֆոնդային բյուջեով հաշվետու ժամանակահատվածում նախատեսվել է 292 245,0 հազար դրամի ծախսեր դրամարկղային ծախսը կազմել է 59 583,1 հազար :

Քննարկելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ներկայացված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարման ընթացքի մասին Սպիտակ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համաձայն թիվ 1-5 հավելվածների:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (1)

2. ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ՀԱՍՑԵՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Զեկուցողը՝ աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Ազգանուշ Ֆրանգյանը պարզաբանում ներկայացրեց, թե ինչու է անհրաժեշտություն առաջացել փոփոխելու ՀՈԱԿԻ-ի անվանումը, հասցեն՝ նշելով, որ ՀՈԱԿ-ը նախկինում սպասարկում էր միայն Սպիտակ քաղաքի տարածքում գտնվող ենթակառուցվածքները և մնացած կառույցները: Համայնքների միավորումից հետո անհրաժեշտություն է առաջացել փոփոխել անվանումը, քանի որ այն սպասարկելու է համայնքի տարածքում գտնվող ենթակառուցվածքները՝ այդ թվում բնակավայրերի: Ինչ վերաբերում է հասցեի փոփոխությանը, քանի որ այն գործունեություն է ծավալում Սպիտակի համայնքապետարանի վարչական շենքում, ուստի անհրաժեշտություն է առաջացել հասցեն համապատասխանեցնել գործունեության վայրին: Ավելացրեց, որ

կազմակերպությունը այսուհետև իրականացնելու է նաև կոմունալ սպասարկման աշխատանքներ, կանաչապատման աշխատանքներ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. «ՍՊԻՏԱԿԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով, գտնվելու վայրի նոր հասցե սահմանել «ՀՀ Լոռու մարզ, ք. Սպիտակ Շահումյան 7, փոստային դասիչը՝ 1804» և հաստատել նոր խմբագրությամբ կանոնադրությունը:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

3. ԼՍԵՑԻՆ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Զեկուցողը նշեց, որ Շենավան համայնքի տարածքում նախկինում բացվել է մանկապարտեզ, սակայն գործունեություն չի ծավալել՝ պայմանավորված համայնքների խոշորացման գործընթացի հետ: Միավորումից հետո կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելու խնդիր է առաջացել: Զեկուցողն ավելացրեց, որ ուսումնասիրություններից պարզվել է , որ ՀՈԱԿ-ի կանոնադրության մեջ կան ոչ համապատասխան նորմեր, ուստի անհրաժեշտություն է առաջացել իրավական տեսանկյունից համապատասխանեցնել օրենսդրությանը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի նախկին Շենավան համայնքի իրավահաջորդը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ համայնքային ոչ առևտրային կազմակերպության անվանումը փոփոխել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն անվանումով և հաստատել նոր խմբագրությամբ կանոնադրությունը

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

4. ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 43-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Խոսելով քննարկվող հարցի մասին՝ զեկուցողը նշեց, քանի որ Կառավարության կողմից նախադպրոցական ուսումնական հաստատությունների համար հաստատված օրինակելի հաստիքացուցակ կա, ուստի անհրաժեշտություն է առաջացել այն համապատասխանեցնել օրինակելի հաստիքացուցակին:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի նախկին Շենավան համայնքի իրավահաջորդը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԵՆԱՎԱՆԻ «ԱՐԵԳԱԿ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շենավան համայնքի «Արեգակ» մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 43-Ա որոշումը:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ՄԱՋՄԱՆՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԱՆՆԱ ԱՋԱՄՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՐԻԲԵԿ ԱՄԻՐՅԱՆ

ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ

ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք.ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ